ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎՐԹԱՆԵՍՅԱՆԻ

Հոկտեմբերի 18-ի գիշերը, Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյանը, սրտի արատի պատճառով, մահացավ հանկարծահաս կերպով։

Հանգուցյալ Տ. Պարգև սրբազանի անակնկալ մահով Սրբոց Հակոբյանց միաբանությունը կորցնում է իր բարի և նվիրված միաբաններից մեկին։

Լուսահոգի սրբազանը ծնվել է 1905 թվականին Փոքր Ասիայի Պալըքեսիր քաղաքում, որտեղ և ստանում է իր նախնական կրթությունը, իսկ Կոստանդնուպոլսի Կենտրոնական վարժարանում՝ միջնակարգ կրթությունը, 1910—1922 թվականներին։ Աշակերտում է նաև վերաբացված Արմաշի Դպրեվանքին 1923—1924 տարիներին։ 1925 թվականին ընդունվում է Երուսաղեմի նորաբաց Ժառանգավորաց վարժարանում և ավարտելով այն, 1930 թվականին ձեռնադրվում է կուսակրոն քահանա։ Այնուհետև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում բարեխղճությամբ վարում է վանական-վարչական պաշտոններ։ 1930—1934 թվականներին վարում է Ս. Աթոռի ավագ թարգմանի պաշտոնը։ 1936—1939 թվականիններին նշանակվում է Ս. Աթոռի հյուրընկալ և հանդերձապետ։ Ապա մինչև 1939 թվականը վարում է Ս. Հարության տաճարի տեսչությունը։

1940—1956 թվականներին անդամակցում է Ս. Աթոռի Տնօրեն ժողովին, միաժամանակ կատարելով վանքի գանձապետի պաշտոնը։

Լուսահոգի սրբազանը ունեցել է նաև գրական, բանասիրական վաստակ, հեղինակն է «Ս. Հարության տաճարի մեջ Ս. Լուսավորիչ եկեղեցին», «Եղիշե պատմագիր և Վարդանանց պատերազմը» գրքերի։ Վերջին տարիներին ձեռնհասորեն նա էր պատրաստում Սաղմոսական օրացույցները։

Տ. Պարգև սրբազանի անունն ու հիշատակը միշտ թարմ կմնան Ս. Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի սրտերում։

«Ցիշատակն արդարոց օրհնությամբ կ-ոիցի»։